

## Գ Ր Ա Պ Յ Օ Ս Ո Ւ Թ Ք Ի Կ Ն

ԱՏՐՊԵՏ.— Քոռ-եղիկ. Վէպ. Թիֆլիս 1898.

ՆՈՅՆԸ.— Շխնոց. պատկեր 1898:

ՆՈՅՆԸ.— Ժառանգներ. պատկեր 1899:

ՆՈՅՆԸ.— Բերսալի Առաքելը— Վէպ. 1899:

ՆՈՅՆԸ.— Թուլումբաշիներ. պատկեր. 1899, (Վերջին շորքը արպած են Նոր-Նախիջևանում):

Պր. Ատրպետը հաջ ընթերցողներին ծանօթ է իւր մի քանի հեղինակութիւններով: Բացի վերոյիշեալներից նա գրել է նաև և երկու մեծ վէպ՝ Խել Կարասիտ (արտատպւած Մուրճից Թիֆլիս 1889) և Ալինստ (տպւած Մոսկւա, 1891). և երկու թատերական բաներ՝ Սարրաֆ ոչ բերգութիւն (Թիֆլիս, 1893) և Շուշան, օպերայի համար (Ս. Պետերբուրգ 1890 թ.): Նրա գրածքների նիւթը վերցրած է Տաճկաստանի հալոց կեանքից, որին նա բաւական մանրամասն ծանօթ է երևում. Նրա բոլոր գրածքներում աչքի է ընկնում աչն բանը, որ նա չի զանազանում վէպը իրականութեան մէջ տեղի ունեցած անցքի մի քիչ ընդարձակ և զարդարուն նկարագրութիւնից, ուր մտնում են նաև խօսակցութիւններ և բնութեան տեսա-

րանների նկարագրութիւններ: Վէպը մի գեղարուեստական ստեղծագործութիւն է: Վէպ գրելու համար հեղինակը պիտի շէպքերը, անձերը, երևութիները և առհասարակ կեանքում պատահած բաները իւր գրելիքի առարկայ շարձեցնուց առաջ գեղարուեստորէն վերարտադրէ: Վէպը որքան իրականութեան մօտ պիտի լինի, աչնուամենայնիւ նա իրականութիւն չպիտի լինի: Որովհետև վէպը պատկերացնում է կեանքի այս կամ այն կողմը, ուստի նրանում կատարած գործողութիւնները կարիք ունին անձնատրութիւնների: Այդ անձնատրութիւնները պիտի լինին տիպի, իսկ տիպը իրական անձնատրութիւն չէ, այլ նոյնաման մարդկանց ընդհանուր շարժութիւնների ամփոփում: Գեղարուեստական երկը ստեղծագործութեան ծնունդ-

է: Ստեղծագործածը կը լինի վէպ, գեղարեստական երկ, իսկ տեսածը կամ լսածը նկարագրել չի լինի երկ, գեղարեստական մի բան, որովհետև նրանում պօէզիա, ստեղծագործութիւն չըկայ. դա կը լինի... ինչ ուզում էք անաւնեցէք, բաց ոչ թէ վէպ, պատկեր, կամ մի այլ գեղարեստական երկ: Երկը երկուներէ հետեւանք է, նրան հոգեպէս կրկնելով պիտի առաջ բերել:

Այս տեսակէտից պ. Ատրպետի գրածքները չի կարելի գեղարեստական երկեր անուանել. դրանք համարեա բոլորն էլ իրական շէպերի և անձնատուութիւնների նկարագրութիւններ են առանց ստեղծագործութեան: Որ իւր գրածքները իրական կեանքից են վերցրած, հեղինակը մի առանձին պարծանքով է վիշտ: Նրա գրքերից շատերի ձևատիւն դրօշմւած է՝ այս ինչ կամ այն ինչ տեղի «իրական կեանքից»: Արմատի ձևատիւն գրած է. «վէպ Բարձր Հալոց իրական կեանքից»: Իսկ «Խն Ատրպետի» սկզբում դրած «Նրկու խօսք»-ի մէջ հեղինակը ասում է, որ վէպի գլխատու անցքերին ականատես է եղել, մօտը ունի շատ ապացոյցներ, գործող անձնատուութիւններից ոմանք էլ շեռ կենդանի են և ալըն, և աւելացնում է. «Մենք աշխարհի ենք, որքան կարելի է, խոսք տալ երեսակաւութիւններից և միայն հետեւել իրականութեան, որը անցատու աշխարհի բեմի իսկական պատկերն է»: Երբի հեղինակը սրանք զիջում է, որ աւելի խոր տպատուութիւն անի ընթերցողի վրայ, որ հատարան իր գրածներին: Միթէ վէ-

պով որևէ գաղափար արտապատու համար անհրաժեշտ է արդարի խոստովանութիւններ մէջ բերել: Աւելի լաւ չէր լինի, ունեցած շտուկները ներուր և այլ ապացոյցների նկարագրութիւններով մի պատուութիւն կամ ուսումնասիրութիւն գրել. միթէ դա պակաս ճանողի կը լինէր «Վէպերի» պակասատու կողմերը պատկերացնելու համար: Այս թէ հալ ընթերցողներից շատերին ծանօթ «Գաղափար ինկլիզիտու» գիրքը, որի նմանը, կարծես, ուզեցել է հալ հարակուսեան տալ պ. Ատրպետը, առանց նրա ասած երեսակաւութիւններից խոսք տալու, կամ առանց «միայն իրականութեան» հետեւելու, պակաս զգանք է առաջ բերում շէպի ինկլիզիտուները: Այս հէնց մեր նորագոյն գրականութեան մէջ եղած բացասական երեսակաւութիւնները գրութիւնը, որպիսիք ունին Բաբի, Շիրանգադէն և ուրիշները, միթէ «երեսակաւութիւնից» խոսք տրած կամ «միայն իրականութեան» հետեւած բաներ են, որ այնքան տպատուրիչ են: Բանը նրանում չէ, ի հարկէ, թէ հեղինակը կեանքում պատահած մի զգելի շէպ կը նկարագրի, թէ նոյնաման, իւր մէջ աւելի շատ ընդհանուր շտուկութիւններ պարունակողը երեսակաւութեամբ կը լրացնի և աւելի տիպալին դարձրած կը պատկերացնի: Բանը նրանումն է, որ առաջին շէպում դուրս կը գալ մի շէպի, թէկուզ հանձարեղ, նկարագրութիւն, իսկ երկրորդ շէպում մենք կ'ունենանք գեղարեստութիւն վերարտադրած իրականութիւն: Այս ա մենք կ'անուանենք—պատկեր»

պատմածքս վէպիկ կամ վէպ, նաչելով գործողութիւնների քանակութեան, ճոխութեան, պարզութեան կամ բարդութեան, աւսինքն գրական սրեղծագործութիւն, որը ընթերցողին նաև գեղարեստական բաւականութիւն կը պատճառուի ի նարկէ իրական շէպքի նկարագրութիւնն էլ կարող է արժէք ունենալ և բաւականութիւն պատճառել, եթէ լաւ է կատարած: Բայց շարունակ միայն Դրանցով զբաղուողին մենք չենք անւանիլ վիպասան:

Պ. Արտպետը իւր գրածքները անւանում է վէպ կամ պատկեր: Բայց, ինչպէս պարզ երևում է, Դրանք ոչ վէպ են, ոչ էլ պատկեր, քալ մարդկանց զարդարուն կենսագրութիւններ և զանազան անցքերի նկարագրութիւններ: Նա թուումըսքիննրը անւանում է պատկեր: Կա ոչ ալ ինչ է, եթէ ոչ Պոլսի երկու թաղերում գոյութիւն ունեցած թուրքմարմալիական (հրէջները) երկու խմբերի կազմակերպութեան և գործունէութեան նկարագիր: Միթէ, եթէ փոխանակ գրելու, թէ կալ-Մքոն հրդեհած մշեցի գալթականներին շուր օգնութեան շրճասաւ, աչք պատճառով էլ նրանց բնակարանը թողրովին ալրեց, — եթէ փոխանակ աչպէս պատմելու, աչ օգնութիւն ինդրելը և մերժելը Դըրած են խօսակցութեան ձևով, իսկ մշեցիները բերնում Դրած են «քիւլֆաթ» և «ձմեր» բառերը — Դրանով «թուրքմարմալները» պատկեր կը Դառնալ: Աչպէս էլ նրա միւս գրածքները: Ալմաստը — Ոսկանի և Ալմաստի չաբարերութիւնների մանրամասն

նկարագրութիւն է (երեի իրական անձնագրութիւններ): Այս վէպւմ բաւական չնշարձակ տեղ է բունել «Բարձր Լալոց թատերասէրների ընկերութեան» նկարագիրը: Ամենայն բարեխղճութեամբ և մանրամասնութեամբ նկարագրած է ընկերութեան առաջ գալը, գործունէութիւնը, խաղացած պիեսները, ալցելունները, վարչութեան անդամների անունները, մինչև անգամ հասցեաների քանակութիւնը: Ապա Դադարանի զանազան նախագահներ և քարտուշարներ նշանակելու և նոցա պաշտօնանկ լինելու արկածալի պատմութիւնները և նոր անման շար բաներ: Ինչու համար ի նարկէ գոյութիւն ունեցող մի հիմնարկութիւն վէպի մէջ կարող է տեղ բըռնել հերոսների գործունէութեան ուղղութիւնը, բնագործութիւնը և ուրիշ հանգամանքներ աւելի կենտական Դարձնելու համար: Բայց գրաչել աչք հիմնարկութեան մանրամասն նկարագրութիւնով, Դա վէպի սահմանները չուրս է. Դա քաղաքակըրթութեան պատմութեան գործն է: Խե կարապետի մասին արդէն մէջ բերինք հէնց հեղինակի իւր իսկ խօսքերը: Կրամատիկական գրածքների պօէզիայի մասին որ խօսք չի կարող լինել: Իրոն Դրամատիկական գրածքներ էլ արժէք չունին: Շուշանի շէպքը արդէն լալոսն է. իսկ Սարաֆի բովանդակութեան մասին առած է «պատմական կեանքից», որեմն աւելի ևս իրական: Քոտ-Նիլի աւագակութիւնները մասին մինչև հիմա էլ պատմում են, կսկ Շիսնոցը, Բէրսայի Առաքելը և ժառանգները երևի

իրական շէպքեր են: (Վուցէ ժառանգներում միքիչ շեր խաշացած լինի և քանակութիւնը): Գուցէ շատերին հետաքրքիր լինի կարգալ Ալմաստի գոհաբերութիւնները Ոսկանի համար, Ոսկանի խիստ վարմունքը կոտորանցալի հետ, Տէր-Կարապետի և Գաւթի խաշագողութիւնները, Շուշանի բէգի գլխին խաշացած օլինը, Քոռ-Նշիկի, Առաքելի և Արտաշէսի (ժառանգներ) վրէժխընդրութիւնները, կաշ-Նազարի գործունէութիւնը (Թուրումբաջիներ), Վարդեան ախպոր հպարտութիւնը և մարաբալութիւնից խուս տալը (Շըխնոց), Թօսունի ուրական ձեռնալ (Սարրաֆ), զանազան մարդկանց արկածները, քաջագործութիւնները, առաքինի վարք ու բարքը, անձնագոհութիւնը, անսահման սէրը և այլն. բաց թէ նրանք մեր կեանքի առանձնապարտութիւնները չեն, ոչ էլ գեղարեստական կողմներ, կամ բանաստեղծական ստեղծագործութիւն: Դէհ, խօս մենք մի նոր վարք-Սրբոցի կարօտութիւն չունինք: Մեզ հարկաւոր են մեր կեանքի երևութները որոշ կերպով լուսաբանւած, մի հիմնական գաղափարի շուրջ համախմբւած. մեզ հարկաւոր են տիպեր որոնց մասին կարգալիս կարողանանք ասել—ասա, սա այս տեսակ մարդկանց ներկայացուցիչ է, սնւած այս ինչ հողի վրայ, այս ինչ երևութների ազդեցութեան տակ: Մեզ հարկաւոր են տիպեր, որոնց մասին կարողանանք ասել—սա մի մարդ է, որ մեր կեանքի այս ինչ պատմական, հասարակական, տրմտեսական, ժառանգական երևութ-

ների արդիւնք է: Մի խօսքով՝ վէպում մեզ հարկաւոր է ունենալ կեանքի ուսումնասիրութիւն, նրա այս կամ այն երևութի տիպալին պարկերով:

Բաւական չէ Շիրակեցի մի Քոռ-Նշիկի պատմութիւնն անել և վրան գրել՝ «վէպ շիրակեցիների պատմական կեանքից». կամ կարծում պատահած անցք նկարագրել և վրան գրել՝ «վէպ Բարձր Հալոց իրական կեանքից»: Միթէ Քոռ-Նշիկի նման մի հարտահարւած որք չէր կարող ծնւել մի ուրիշ տեղ, կամ «Ալմաստ» ում նկարագրւած շէպքերը չէին կարող պատահել Տաճկաստանի մի այլ քաղաքում: Եթէ ասենք, որովհետև գործողութիւնները մեծ մասով կարարւում են կարծում կամ Շիրակում, դա էլ ճիշտ չի լինի, որովհետև Քոռ-Նշիկի մասին աւելի չէ պատմւած, երբ նա գործում էր Շիրակի սահմաններից դուրս, իսկ Ալմաստում նկարագրւած անցքերը մի խոշոր մասով տեղի են ունենում կ. Պոլսում կամ այլ տեղ: Բաց եթէ ընդունենք անգամ, որ շէպքերը պատահում են մեծ մասով Շիրակում կամ Բարձր Հալքի սահմաններում, այնուամենայնիւ չենք կարող ասել, թէ դրանք Շիրակի կամ Բարձր Հալքի կեանքից վէպեր են, որովհետև չկան այդ տեղերի մասին առանձնապարտութիւններ, որոնք միմիայն դրանց չարտուկ լինին, որ կարելի չըլինի ասել, թէ այդ երևութները ամեն տեղ էլ կարող են լինել: Եթէ Քոռ-Նշիկում նկարագրւած անցքերը ամբողջովին փոխադրենք Արարան, Փամբակ կամ

լսուի, միթէ չէնք կարող նուն իրա-  
տւածքով ասել՝ վէպ Աբարամի, Փամ-  
բակի կամ Կոռու կեանքից: Միթէ  
նունպիսի համբաներ, որոնք հովին  
չեն ուզում ալիկի տալ, չըկան ալ  
տեւեր, կամ սրբ հովի աշխատանքը  
հարստահարունք չըկան ալ տեղե-  
րում բացի Նիրակից, իսկ բարբառի  
մի քանի առանձնապարկութիւններ  
կամ խի-Վորսքիլիսա անունը չեն  
կարող աչք վէպը (եթէ յա վէպ հա-  
մարենք) Վէպ շիրակեցիներ կեան-  
քից) շուրս բերել. ալ պէտք էր  
ասել «Դէպքը պատահել է 40-ական  
թւականներին Նիրակում, կամ, ինչ-  
պէս արեւորցիք են անում՝ ամարշու-  
մը պարմութիւն»:

Այդ գանազան կեանքերից վեր-  
ցրած, երբեմն իրական, պարմու-  
թիւնների հերոսները լըար անքան  
նման են, որ համարձակ կարելի է  
մինը միտի տեղ դնել: Կլանց խո-  
սակցութեան ոճը բոլորովին նունն  
է. բիշկին էլ, անկիրթ գիւշացին էլ,  
խոսարարն էլ միակերպ, երկար պար-  
բերութիւններով, ոճի միևնուն  
առանձնապարկութիւններով են խո-  
սում: Բոլոր հերոսներն ու հերոսու-  
հիներն էլ երեկի գատրոններ են.  
երբ ուրիշու առիթ է լինում, ուրում  
են շար մեծ ախորժակով ասիական  
կերակուրների ամենաընտիր տեսակ-  
ները: Երբեմն մրաջն, աճ էլ հերո-  
սուհիների, արտաքին նկարագրու-  
թեամբ է զբաղում հեղինակը. և խո-  
կապէս ապացուցանում է որ «երկա-  
կալութիւնից խոյ է տալիս»: Զե-  
շինակը երեկ աչքի առաջ ունի գե-  
շեցկութեան մի տիպար, և նրա բո-

լոր հերոսուհիներն էլ արտաքին  
պարկերով շրան են նման:

Խե կարապետում Տիրուհու մա-  
սին ասած է. «Տիրուհին մի գասն  
և շորս տարեկան աշխիկ էր, ոչ շար  
բարձր հասակով, բարակ կազմա-  
քով, սե-սե աչքերով և թուխ մա-  
զերով, որոնք փալում էին սե սաթի  
նման: Մի քիչ թուխ էր մորթը,  
բայց ոչ սե ու շեղին, ալ ճիշտ աչն  
գունով, որին մեր ժողովուրդը ցորե-  
նագուն է անանում: Բայց չքնաշ  
էր նրա շէմքի գծադրութիւնը, ի-  
րար կցած բարակ և երկար նուրբ  
ունքերը, խոշոր աչքերը՝ բամբակի  
նման սպիտակուցներով, երկար թեր-  
թեկները, ուղորկ, նուրբ և բուլթալ  
քիթը, վարդագուն լիշերը, կարմիր  
ու բարակիկ պունկները—այս ամենը  
նրան տեսնող երկտատարդի սիրտն  
էր կորստում, ողին թոցնում, ուչքը  
տանում և ալնը. (Խե կարապետ 66)  
Բէգի կնոջ մասին ասած է. «...և  
մի վսեմափալ, բարձրահասակ և  
բարեկազմ փիկին ներս մտաւ: Բամ-  
բակի նման սպիտակ շէմքի վրայ  
թէն տարիները իրանց խորշերն ու  
ակոսները թողն էին, բայց Ֆիլնջա-  
նի նման խոշոր կեռ աչքերը (?) երե-  
կի փպագրական սխալ է) սե ու եր-  
կալն թերթեկներով, բարակ ու  
նուրբ ունքերը և վարդի պէս կար-  
միր աչքերը կարծես բնութեան հեր-  
կուում էին ու պահպանում նաճա-  
պետական խաթունի առաջութիւնը:  
Արձաի սրածար ունքը, վարդագուն  
բարակիկ շրթունքները և կղակի վրայ  
գնդիկ խալր ապացուցանում էին  
բնութեան աչն առաջ պարզները,  
որոնցով զարդարած է եղել լեռ-

Ների ԴՉԽՈՆՏԻՆ և ծաղիկների ԴՈՒՍԿՈՒՆԻՆ  
 րը իւր գարնան տարիներում: Վե-  
 հապանձ լալն ճակատը զարդարած  
 էր» և այլն: (Սե Կարապետ 126):  
 Ալմաստի հերոսուհիները Կոստան-  
 ցալի մասին ասւած է, որ նա «ա-  
 ոռջ և գեւեցիկ կազմւած» ունէր.  
 (Ալմաստ 21). Ալմաստի աշկազ, Գո-  
 հարիկի մասին ասւած է, որ նրա  
 «գեղեցկութեան փալ»: ամենքի ուշ-  
 քըն էր գրաւում: Սե-սե մազերը,  
 խոշոր աչքերը, երկալն թերթեունք-  
 ները, նուրբ ու խիտ ունքերը, փոք-  
 րիկ շրթունքները, սպիտակ մորթը,  
 վարդագոլն աչտերը խոտրանում էին,  
 որ նա լինելու է ժամանակին Ար-  
 զըրուժի ամենագեղեցիկներից զերա-  
 զանցը»: (Ալմաստ 67). իսկ Ալմաս-  
 տի մասին նոյն երեսում՝ «Գեղեցիկ  
 էր հէնց ինքը Ալմաստն էլ, սիրուն  
 ու ասորով, և ալնքան տալու հե-  
 շուրթիւններն ու կսկիծները տեսե-  
 լուց փտոջ Դեռ պահպանել էր իւր  
 թարմութիւնը, քնքընթիւնը ու ե-  
 րեսի փալը: Խոշոր ու հրացալտ սե  
 աչքերը, թաւ թաւ ունքերը, և լալն  
 ճակատը փալում էին անմեղութեան  
 Դրոշմով. արեից ալրած ցորենագոյն  
 Դէմքի մորթը և վառվառն աչտերի  
 ցոլացմունքը Դեռ չէին թառամել և  
 շրթունքների կարմիր գոյնը Դեռ  
 մըցում էր շատ օրիորդների հետ:  
 Բարձր հասակը, վալեւուջ կազմւած-  
 քը, լալն կուրծքը և թիկունքը, բա-  
 րակ մէջքը և գեղեցիկ քալերը նրա  
 կին կամ մալը եղած լինելը կասկա-  
 ծեցնում էին»: Շուշանի մասին աս-  
 ւած է՝ «Շուշան էր անուշը. նման  
 ալն սպիտակ ու քնքրիկ ծաղիկն»,  
 որ աճում է հովիտների ձորերի լա-

տակում: Սպիտակ էր մորթով Շու-  
 շանը՝ շուշանի նման, աչտերը վառ-  
 վառուն՝ վարդածաղկի նման, խոշոր  
 ու սե աչքերը՝ սե սաթի նման, կա-  
 մար ու խիտ ունքերը՝ թալնի նման,  
 նուրբ ու սլորիկ քիթը՝ նկարած  
 պատկերի նման, բարաւիկ ու փոք-  
 րիկ շրթունքները՝ նուան հատիկների  
 նման, սպիտակ արամները՝ մար-  
 գարտի նման, լալն ու թափանցիկ  
 ճակատը՝ հալուու նման, սե մազերը՝  
 երկար, խիտ փալուն մետաքսի նման  
 երկար վիզը՝ չլիւս վիշտակի նման,  
 բարձր բուր, չինարի նման, լալն  
 կուրծքը՝ խորանի նման, ուռած,  
 ցցւած սորինքները՝ հասած Դեղձի  
 նման, Դիւրախոթ բազուկները՝ եղ-  
 ջերուի ոտտիկների նման, փոքրիկ,  
 կակղիկ ձեռքերը՝ կոկոն ծաղիկ նման  
 և համետ քալերը թագուու նման»:  
 (Ալմաստ 104). Էն է պակաս, որ  
 ասի՝ «կտուցը սուր՝ մեր Արշա-  
 կի քթի նման, բմբուլը խուճուճ՝  
 թեկերը Տիգրանի մազերի նման,  
 փալիկի՝ Շուշիկի կունքի նման», և  
 Դուրս կը գալ «հէքիաթ, հէքիաթ  
 պապ» և ոչ թէ «վէպ Բարձր Հալոց  
 իրական կեանքից»: Բայց աւելի լաւ  
 է շարունակենք: Ալմաստում մի կոչը  
 Մարո կալ. Դրա մասին էլ ասւած է.  
 սկնոջ (Մարօի) բարձր չինարի նման  
 հասակը, առոջ կազմւածքը, երկար  
 բարակ ունքերը, նուրբ քիթը, բա-  
 րակ և վարդագոյն շրթունքները ա-  
 պացոյց էին, որ նա եղել է ժամա-  
 նակին գեղեցկուհիների ԴՉԽՈՆՏԻՆ»:  
 (Ալմաստ, 493): Ապա Ջաւալի Սուլ-  
 թանէի մասին՝ «նրա հասակը, ձեռը,  
 շարմածքը և կազմւածքը Դիցուու  
 միալն լատուկ էր: Բամբակի նման

սպիրտակ ղէմքով, խոշոր ու սև սև աչքերով, կեռ կեռ բարակ ունքերով, երկար թերթիչ քնքերով, բաց վարդագոյն աչքերով, կարմիր շրթունքներով, բարձր վզով, երկար, թաւ ու սաթի նման փալլուն սև մազերով, լայն թիկունքով, գունդ գունդ ծիծիկներով, բարակ մէջքով նման էր աչն անմահներին, որոնք...»  
 և այլն, (Ալմաստ, 524): Միւս գըրւածքներինց՝ Գոռ-Նզիկի հերոսունու «հրացալոյ աչքերը» մարել էին»։ (Ք. Նշնիկ, 29): Շինոցի Մարգարիտը «հասած էր կարմրած խնձորի նման, սպիրտակ ձեռներն ու մորթը չէր կարելի զանազանել հագնւած (?) սպիրտակագոյն չիթ ղարիալից, Բագմահլա մազերը, որ շարքով սփռւած էր թիկունքի վրայ, փալլում էին սև սաթի նման: Խոշոր աչքերը ցոլում էին և բոցեր արձակում շուրջը, իսկ աչքերը մախսի վարդից էլ վարդագոյն և էլ հրապուրիչ» (Շինոց 8): Ժառանգներից իմանում ենք, որ Բէգի համար փախցրած «հրչտականման գեղանի օրիորդների անմեղ տիպար .. գո՛ճը շատ անգամ նւաշած էր լինում, դուռը կախ քցած, սև ունքերի տակ երկար սև սև թերթիչներով աչքերը փակւած, ղէմքը սպիրտակ մարմնի նման, տիտուր և անշարժ: Երկար և սաթի նման փալլուն մազերը սփռւած սաւանի վրայ, իսկ կիսով չափ բաց, փրոսկրի նման ուղորկ և փալլուն կուրծքը հազիւ նկատելու չափ բարձրանում և իջնում էր, (ժառ. 51) Աննամանը ամենից կատարեալն է. «Աննամանը՝ փոքրիկ հովուէջն, արդէն մտել էր իւր տաննհինգերորդ գարունը: Նա

փոթել էր ղեռահաս վարդի կոկոնի նման, բարձրացել էր... նոճիների նման: Թէև հարուստ հարսապ ճղմերը և կիզիչ արեւը նրա ձիւնի նման սպիրտակ մորթի վրայ հովական փոքրիկներում թողել էին իրենց կնիքը, բայց Աննամանը տնական կեանքում աւելի գեղեցկացել էր, ընդունելով Շիրակի ցորենի զւարթաղէմ գոյնը: Նրա մինչև կրկնները հասնող սաթի նման սև մազերը, նրա լայն ճակատը, կամար ունքերը, խոշոր աչքերը իրենց երկար թերթիչներով, վարդից էլ կարմիր աչքերն ու շրթունքները թողում էին ղիտոր մահկանացուներին աչքերը և զրաւում սիրտն ու հոգին: Նրա հետ շրջելը, նրա հետ հառաչելը, նրա ամբրոսական բուրմունքը ծծելը, նրա հետ գրկախառնելը կարող էր ամենաթշուառ արարածին թներ տալ և սերովբէական թուխքներով երկինք բարձրացնել» (ժառ. 61): Խորհուրդ ենք տալ սօճանր մեղքերով մեղուցեալներին շտապել ղէպի Բղի զաւառը—աչնտեղից հնչող թեամբ կարելի է «սերովբէական թուխքներով երկինք բարձրանալ» Այս նկարագրութիւնները կարյալիս մարդակամալ կասկածում է, երևի Թիւրքաց Հայաստանում չէկ աշխիկներ չըկան, կամ թէ չէկերը աչնտեղ երևի արկածների չեն պատահում. գոնէ ալդպէս են ցոլց տալիս «իրական կեանքից» վերցրած այս վէպերն ու պատկերները: Բէրսայի Առաքելում չիւած է մի գեղեցկուէի՝ Հէլէն խանումը, իսկ Թուրքաբայիներում կին չըկայ, որ նկարագրէր: Շուշանում և Սարափում, զրւածքների թատերական

լինելու պատճառով հերոսուհիների արտաքինի նկարագրութիւն չկալ— եթէ ոչ սրանք էլ անշուշտ կունենալին բարձր չինարի հասակ, սև սաթի նման երկազն մազեր, սպիրտակ կամ ցորենի գոյն մորթ, խոշոր աչքեր երկազն թերթեխներով, լաչն ճակատ, Դեղձի նման ծիծիկներ, նուրբ և ուշորկ քիթ տափակ ծայրով:

Յուսով ենք, որ ընթերցողը կը ների մեզ այս երկար արտագրութիւնների համար: Արանով մենք ուզում էինք մի փոքրիկ նմուշ տալ, թէ ինչպէս է Պ. Ատրպետը գրում իւր «Իրական կեանքից» վէպերն ու պատկերները, և թէ ինչ տեսակ խնամքով է նա ուսումնասիրում իւր պատկերացնելիք տիպերը:

1898 և 99 թւերին պ. Ատրպետի լուս ընծայած գրքովներն էլ զերծ չեն նոյն ընդհանուր պակասութիւններից: Արանք կամ հերոսների պատմութիւններ են (Բէրսալի Առաքելը, Ժառանգներ, Քոռ-Նշիկ) կամ պատահարների նկարագրութիւն: Բէրսալի Առաքելը մի գաւառացի է, որ Կ. Պոլսում խոհարարութեամբ վաստակած գումարով ապրանք է գնում հայրենիքում վաճառելու համար, բայց մինչև որ խաճութից ապրանքի հակերը Դուրս կը բերէր, վաճառականը իրեն սնանկ է հրատարակում, և Առաքելի ապրանքը գնում է մեծամեծ պարտքեր լրացնելու: Իսկ Առաքելը վրէժխնդրութեամբ վառւած սպանում է վաճառականին և նրա կնոջ սիրեկան բէլին, որը Դատարանի նախագահ լինելով մերժել էր Առաքելի պահանջը: Քոռ-Նշիկը Շիրակի Խլի Ղա-

րաքիլիոս զւլի հովիւն է, որը գիւղի համլանների Դէմ կատարած է, որովհետև նա ուժիկը կորում են և նրա աշխատանքը հարստահարում: Նա էլ աւագակ Դարձած սար ու քար ընկած կորոպրում է հարուստներին և աղքատներին օգնում: Նշիկի և նրա ընկերոջ հրացանները շարունակ ցրում են թշնամիների ուշերը, բայց վերջիններին գնդակները Նշիկի մօտովն են անցնում: Վերջում Նշիկը փախցնում է և նշանածին, որը հարկադրւած պատկել էր իւր չըսիրած մինի հետ և հարսանեկան թափորի մէջ եկեղեցուց տուն էր վերադառնում: Նշիկին հեղինակը շատ միջոցներ ունէր մի գեղարեստական պատկեր Դուրս բերելու. զրքի սկզբի տողերից մարդուսադրում է սպասելու մի լուրջ ուսումնասիրւած տիպ, որովհետև չիշում է, որ Նշիկը հովիւ լինելով շարունակ հրացանածգութեամբ էր զբաղւած, նրա հօրը գոլուձեան պատճառով կախել էին, ինքը մի նիհար, սգեղ կերպարանքով, փոքրահասակ և անմազ երեսով մի մարդ էր: Եւ մարդ սպասում է, թէ անշարունակութեան մէջ կը գան աչք ժամանակաւ Շիրակի աւելի լուրջ ուսումնասիրւած պալմանները, և մեր առաջ կը պատկերանայ մի իսկական գեղարեստական տիպ, որ սունկի նման բուսած չի լինի, այլ ուղղակի հերոսանք որոշ պատճառներու: Բայց չոյսը ի Դերն է ելնում և ստացւում է մի պատմական անձնաորութիւն, նրա զանազան արկածների և քաջագործութիւնների նկարագրութեամբ: Ժառանգորի մէջ Արտաշէսը չարձակ-

ում է իւր հօր կալքերը չափաւորա-  
կած, իւր մօրը տիրացած և իրենց  
զիւշում հաստատուած քիւրճ բէզի  
սարալի վրայ, և նրա ապարանքը  
ալրելով նրա և ճրա որչու մահան  
պատճառ է շառնում: Գեղեցիկ ղէպ-  
քեր են, բայց թէ յրանք ոչ մեր  
երկրի համար ընդհանուր երևութեն-  
քեր են և ոչ էլ հոգեբանական նշանա-  
կութիւն ունեցող ճիշտ պատկերներ:  
ուրմն ոչ տիպալին են, ոչ գեղարժե-  
տական: Երևոցում էլ ստատուած է  
Տաճկաստանում սովորական յարձած  
մի բան, կալքերի չափաւորութիւն  
վաշխառուների կողմից: Իսկ թու-  
լումբաջիների մասին արդէն վերևը  
խօսեցինք: Երևոցում մի հետաքրք-  
րելի երևութ է մէջ բերած. յա մա-  
րարայումիւնն է, ալիւնքն հողագործ  
գիւղացի յասակարդ, որ ճարտական  
չրութեան մէջ է ընկել: Արդ չափա-  
զանց հետաքրքիր երևութի մասին  
ալնքան պակասաւոր, կցկոտր տե-  
ղեկութիւններ կան, ալնքան քիչ են  
պարզած յրա հանգամանքները, որ  
ընթերցողը շատ քիչ կարող է գա-  
շափար կազմել ալք մասին. մինչդեռ

հեղինակը երևի հնարաւորութիւն  
ունէր աւելի մանրամասն պարկե-  
րացնելու մեզ ալք երևութը և յրա-  
նից առաջացած չարիքները:

Եթէ ի ընդհանուր նորա ուղե-  
նանք գտնել պ. Արարկտի հրատա-  
րակած վերջին գրքովհետեւ, կը  
տեսնենք, որ նա զբաւում է հա-  
րըստահարածների և զրկածների  
պատմութեամբ, և սրանց վիճակին  
ուրիշ ելք չի գտնում, բացի կատա-  
լի վրէժիւնչրութիւնից: Գոնէ ալք  
հարստահարածների և զրկածների  
վիճակը, ալք վիճակի առաջ գալու  
մանրամասն պաւմանները ուսումնա-  
սիրէր և զուցէ մի աւելի նպատա-  
կաւարմար միջոց գործը յրա առաջն  
առնելու համար: Գուցէ իւր նկա-  
րագրած ալք տեղերի կեանքը թող  
է տալիս ալս կամ ալն կազմակեր-  
պութիւնը, ալս կամ ալն ձեռ գոր-  
ծունէութիւնը հասարակական, տըն-  
տեսական կամ մի ուրիշ ասպարէ-  
զում, ալք բաների հետ մեզ ծանօ-  
թացնէր հեղինակը:

Մար. Յար.